

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 29-ին Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում քահանայական ձեռնադրություն է ստանում նույն եկեղեցու սարկավագ Գրիգոր Հակոբյանը և վերանվանվում Տեր Թաթուլ քահանա:

Հոկտեմբերի 28-ին, շաբաթ օրը, երեկո-

Մի պահ ձեռնադրության արարողությունից

յան, հավարտ կիրակամտի ժամերգության, կատարվում է «Կոչումն քահանայության», ըստ Ձեռնադրության Մաշտոցի, խարտավիլակությամբ Տ. Մյուռոն քահանա Ադամյանի:

Հետևյալ օրը, կիրակի, ի ժամ սուրբ պատարագի, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը կատարում է ձեռնադրության և օծման կարգը, ապա նորընծա քահանային տալիս իր հայրական օրհնությունը՝ մաղթելով նրան անսասան հավատք և հավատարմություն դեպի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կոչումի գիտակցություն և անմնացորդ նվիրում դեպի իր սրբական առաքելությունը՝ դառնալու համար Տիրոջ այգում «մշակ առանց ամօթոյ»:

Տ. Թաթուլ քահանան ծնվել է 1945 թ. Պարսկաստանում, Իսպահանի շրջանի Հապարջրիբ գյուղում, որտեղ և ստացել է իր նախնական կրթությունը:

1968 թ. նա իր ծնողների հետ ներգաղթում է հայրենիք՝ Սովետական Հայաստան, և բնակություն հաստատում Լենինական քաղաքում: Այստեղ նա, իր ուսումը շարունակելով հանդերձ, կանոնավոր կերպով հաճախում է եկեղեցի և հետևում եկեղեցական ու ծիսական արարողություններին: 1983 թ. նոյեմբերի 28-ին թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոսի ձեռամբ ստանում է սարկավագության աստիճան:

Նորընծա քահանա հայրը իր քառասունքը անց է կացնելու Լենինականի Ս. Աստվածածին կամ Յոթվիրաց եկեղեցում: